

ԲԱՃԱՆԳԻՆ
Ի Պուլկովիա
Տարեկ. 10 ֆր.
Վեցամս. 5 "

Արտասահման
Տարեկ. 12 ֆր.
Վեցամս. 6 "

Ամերիկա
2 Տոլ. 30 սենդ
ԿԱՆԻՍԻԿ



ՊԵՏԵՐԵՔ
Վրոթիւնքեա
չին տրուիր:

Հասցէ
DIRAN
PAPAZIAN
YILDIZ TABIA
VARNA
BULGARIE

ՇԱՐԱԹԱՅՍՆԴԵՍ. ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱՒԵԾՅԱԿՍՆ

Դ. ՏԱՐԻ

ՆՈՅ 11 ՇԱՐԱԹ 1900

ԹԻԻ 187

Ի նպաստ Ազգ. Հրահանգի հրապարակ ելած
1901 տարւոյ Օրացոյցին վաճառմանը համար Պատրի-
արքական հետեւեալ կոնդակը գրկուած է նաև Պուլ-
կովիոյ ամբողջ Հայ եկեղեցիներուն.

ԿՈՆԴԱԿ

«Սիրեցեալ որդւոց մերոց համօրէն հաւա-
տացելոց Սուրբ և Ուղղափառ եկեղեցւոյս մերոյ,
չնորհք և սէր և խաղաղութիւն և օրհնութիւն
տիրաւանդ:

Ուաքելական է պատգամն, որ կը պատուիրէ
ամեն Քրիստոնէի. «Պատրիարքական Սեանքն Յիսուսի
գործին իսկ առաջ. Երանելի է մանաւանդ տալ
խաղաղութիւն» (Գործ. Ի. 35) Այս հիման վրայ մեր
ալ շարունակ յորդորներ կուղղեմք ձեզ, տալ ու
նուիրել, տալ ու ողորմիլ, տալ ու դարմանել, և
ամեն տեսակ կարօտութեանց նկատմամբ չեմք
դադարիւր դալ ու բաղխել ձեր սրտի դուռները,
բացատրելով կարօտ կացութիւնը և ցուցնելով
անհրաժեշտ պէտքը և խրատելով օգտակարագոյն
եղանակը, կը յայտարարեմք միանգամայն կա-
տարեալ ուրախութեամբ թէ մեր խրատներ ա-
պարդիւն չեն մնացած և ամեն անգամ որմեք և
մեր նախորդներ և մեր գործակիցներ դիմած են
մեր բարեպաշտ ժողովրդեան, անոնց նուէրներն
ու ողորմութիւնները հասած են առատապէս, և
անով պահուած և պահպանուած դարգացած են
բոլոր մեր կրօնական և բարեգործական և կրթա-
կան հաստատութիւններ: Յայտնի է ընդհանրա-
պէս թէ մեր ազգային հաստատութիւնք մնայուն
կալուածներով հարուստ չեն, այլ անոնց ամենուն

կեանքն ու արդիւնքը ժողովրդեան նուէրներով
և ողորմութիւններու պահուած է: Եւ այս մանա-
ւանդ ամենախալտի է մեր Ազգային Ս. Փրկչեան
Հիւանդանոցի վրայ:

Տրուած նուէրներուն մէջ կան մեծաքանակ
նուիրատուութիւններ, նշանաւոր շինութիւններ,
հարուստներու վայել ողորմութիւններ, որովք
քանի քանի մեծանուն անձեր Բարեբաբի ան-
ուամբ պատուուած են: Կան ևս մանր ողորմու-
թիւններ, ձեռքէ նուէրներ, համեստ ընծաներ,
որք կամ պնակի և գանձանակի մէջ թաղուած և
կամ ուղղակի Հիւանդանոցին յանձնուած լինե-
լով, քովէ քով կուգան և նշանաւոր օգնութիւն
կը կազմեն, ոչ նուազ յարգի և ոչ նուազ արդիւ-
նաւոր: Այս եղանակներէն զատ կայ նաև անուղ-
ղակի օգնութեան եղանակ մը, և այս է գնել
այն նիւթերը և աւարկանքը, որք կը պատ-
րաստուին Հիւանդանոցի Հոգաբարձութեան խը-
նամքով, և կը վաճառուին ի նպաստ նոյն Հիւան-
դանոցի, և պատրաստութեան դոյլն ծախքը
զեղչուելով, մնացորդը կը լինի Հիւանդանոցի հա-
տոյթ և գնողներուն կողմանէ իսկապէս օգնու-
թիւն: Ասոնցմէ քանի մը տեսակներ կային ար-
դէն, նորեր ալ կը կարգադրուին հետզհետէ, և
ամենուն համար հաւասարապէս յանձնարարու-
թիւն կընեմք, այլ առանձին կերպով մտաւորու-
թիւն կը հրաւիրեմք Հիւանդանոցի հրատարակած
Օրացոյցներուն վրայ, մին ֆոքր և դիւրագին մէկ
գահեկանի, միւսը Ընդարձակ և ճոխ տափը գահե-
կանի: Օրացոյցը ամեն անհատի համար ամբողջ
տարուան մը համար անհրաժեշտ ընկեր մըն է,
որ շատ կարեւոր գիտելիքներ ու պիտանի տեղե-
կութիւններ և ժամանակի հաշիւներ և եկեղեցա-
կան տօնից և պաշտամանց ծանօթութիւններ կը
պարունակէ, որք ճիշդ և վաւերական կերպով հա-
ւաքուած են: Ի՞նչ կարժէ. Սիրելիք, եթէ ամեն

Հայ, բոլոր Պատրիարքութեան սահմաններուն մէջ, նոր տարւոյ առթիւ գահեկան մը տայ եւ հատ մը Փոքր Օրացոյց գնէ, և ով որ կարող է տասն գահեկանով գեղեցիկ և օգտակար և առատ հմտութիւններով լեցուն Ընդարձակ Օրացոյց մը ստանայ. բայց այս կերպով հնար է մինչև իսկ քանի մը հարիւր հազար Օրացոյց սպառել եւ Ազգ. Հիւանդանոցին քանի մը հազար ոսկիներ նուիրել: Անցեալ հաշիւները զննելով տեսած եմք թէ լաւագոյն տարիներու մէջ հաշիւ քսան կամ երեսուն հազար օրինակ Օրացոյց ծախուեր է, իսկ անցեալ տարւոյ մեր յորդորին վրայ մինչև քառասունհինգ հազար հասեր է, որ սակաւին շատ քիչ է բաղդատում մեր ժողովրդեան, մինչ հարիւր հազարի չափ Օրացոյց՝ միայն Մայրաքաղաքիս մէջ հնար էր վաճառել, թող ուրիշ քաղաքներ, թող բոլոր գաւառները:

Արդ՝ մեր այս կոնդակին կրկնութեան նպատակն է, յորդորել մեր բարեպաշտ ժողովուրդը, որ ամեն Հայ առանց բացառութեան մերձակայ նոր տարւոյ առթիւ, գոնէ մէկ գահեկանի չնչին կաղանդէքը նուիրէ Հիւանդանոցին, և այս ալ ոչ թէ բացէն նուէր մը, այլ փոխարէն իրեն համար օգտակար՝ մանաւանդ թէ անհրաժեշտ Օրացոյց մը ստանալ և ներքին մխիթարութիւն ալ զգալով թէ Հիւանդանոցի օգնութեան նուիրումը նշանաւոր դուստրին մէջ ինքն ալ իր մասնակցութիւնն ունի:

Այնչափ դուրին, այնչափ գեղեցիկ, այնչափ օգտակար է այդ նուիրատուութեան եղանակը, որ բաւական կը սեպենք միայն նորէն յիշեցնել, վստահ լինելով թէ մեր Սուրբ և ուղղափառ Եկեղեցւոյ զաւակներէն ամէն մէկը՝ մեծ ու պզտիկ, այր ու կին, հարուստ ու աղքատ պիտի փութայ զայն գործադրել և անոնք որ ուրիշներու վրայ հոգ ու վերակացութիւն ունին, պիտի կրկնեն մեր խրատը և պիտի յորդորեն ամենքը այդ գեղեցիկ նուիրութեան:

Յատկապէս կը յանձնարարեմք Գերաշնորհ Եպիսկոպոսաց և Հոգեշնորհ Վարդապետաց և Արժանաշնորհ Քահանայից, որպէս զի խօսին ու խրատեն ու յորդորեն ու քարոզեն իրենց պաշտօնավարութեան սահմաններուն մէջ, և Վիճակներու և Եկեղեցիներու մատակարարութեան հսկող Ժողովներ և Խորհուրդներ իրենց կողմանէ դիւրութիւններ ընծայեն և Ազգ. Հիւանդանոցի Օրացոյցներէն պէտք եղածին չափ կանուխէն բերել տան և Եկեղեցիներու դուռները և բանկալները պատրաստ ունենան ի դիւրութիւն բարեպաշտ ժողովրդեան:

Տէր Յիսուս՝ որ այրւոյն լուսան օրհնութեամբ ընդունեցաւ և բաժակ մը ցուրտ ջուրին անկորուստ վարձք խոստացաւ, ընդունի ի բարին բո-

լոր բարեպաշտ Սիրեցեալդ այդ փոքրիկ նուէրը, և իր օրհնութիւններով պահէ զձեզ և պահպանէ, բոլոր ձեր պարագայիւք և տա՛մբ և աղագտոհիւ, զերծ ամեն փորձանքներէ, և նորանոր բարեքներով լեցուն ՆՈՐ ՏԱՐԻ շնորհէ և հրաշափառ ԱՌՏՈՒԱԾԱՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ տօնը շնորհաւոր կերպով կատարելու հասցնէ:

Տուեալ ի Պատրիարքարանէս Կոստանդնուպոլսոյ յամի 1900 ի Հոկտեմբերի 1 ընդ 160 թուահամարու Կոնդակաց:

Հայելի — Հիւս, մեր Թաղ. Խորհուրդները պարտաւոր են Հիւանդանոցի գրասենեկէն պէտք եղած քանակութեամբ Օրացոյց բերել տալով եւ կեղեցիկներու բանկալներուն մէջ վաճառել տալու: Ձեռք կարծեր թէ պիտի գտնուի Թաղ. Խորհուրդ մը որ իր այս աւագ պարտականութեանը մէջ թերանայ:

ԱՉԳԱՅԻՔ

Ֆրանսական բարեգործական մարմին մը ասկէ առաջ ի նպաստ Որբերու 200 ոսկիէ, աւելի գումար մը շրկած էր Պատրիարքարան. արդ նկատելով որ մօտ է այն չորս տարուան պայմանաժամը յորում կարգ մը որբանոցները պիտի փակուին և որբերը իրենց բազուկներու աշխատութեամբը պիտի ապրին, Որբերու Խնամատար Յանձնաժողովը մէջ առաջարկուած է նոյն գումարը որբերուն յատկացնել իբրեւ դրամագլուխ: Այն որ կօշկակարութիւն պիտի ընէ՝ կօշկակարութեան գործիք, այն որ դերձակութիւն՝ դերձակութեան վերաբերեալ, և այն որ երկրագործութեամբ պարապի, զոյգ մը եղ ևն. ստանան:

Յանձնաժողովը այս մասին իւր որոշումը պիտի տայ յաշուրդ նիստին:

Ապերախս մը. — Սիւտարցի Մկրտիչ Սվաճեան անուն մէկը ասկէ երկու տարի առաջ Լաւնաքա (Կիպրոս) երթալով կը հիւրընկալուի Յակօբ անուն ոստիկանի մը տանը մէջ: Մկրտիչ երկու տարի ձրի ուտել խմելէ վերջ, իր երախտագիտութիւնը յայտնելու համար ուրիշ բան չի գրտներ, եթէ ոչ իր հիւրընկալին դեռաստի կինը առեւանդել՝ առանց մոռնալու տան արժէքաւոր

նիւթերն ալ մեկտեղ առնել, Երկու շուտիկ սի-
րահարները Մէսաթըրիի շագնաւով Ամերիկա կը
նաւէին, երբ իրենց ճամբորդութիւնը վերջ գը-
տեր է իլմիրի մէջ, ուր գողն ու անհաւատարիմ
կինը ձերբակալուեր և զրկուեր են ի Լառնաքա:

— Ստացանք բժշկ Պ. Սիմէօն Շահ—նաղար-
եանցի «Մշակ»-ը վերեաղրով 98 երեսներէ բազ-
կացեալ շախմատի քննադատականը, որ արդի
«Մշակ»-ի (1896էն ի վեր) հին «Մշակ»-ի սկզբունք-
ներուն դէմ դաւաճանած ըլլալը կը հաստատէ
հզօր փաստերով զորո՞ւ նոյն իսկ «Մշակ»-էն առաջ
կը բերէ: Բանասիրաց ընթերցմանը արժանի է
սոյն երկը որ «Մշակական» անունը կրող 5—6
պոռտախօս պարոններու գրական ասպարէզի
մէջ ունեցած գիլատտորական և ազգակործան
պախարակելի ընթացքը մատնանիշ կընէ: Գինն
է 1 ռուպլի: Գիմել հեղինակին սա հասցէով:

Տօթեօն Ս. Կ. Շահնազարով

22 Սանթրալ գնիժմանա Թիֆլիզ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Սիւրբաբէ, 1 Նոյ. 1900

Հանրային հաստատութեանց կազմող և տէր հան-
րութիւնն էր բացարձակապէս և առաջագրուած նպատա-
կը և հանրութեան իրաւունքները անբռնաբարելի և ան-
հարստահարելի էին բացարձակապէս: ագոնց այսպէս
լինելուն համապատասխանող օրինադրութիւններ եղած
կը լինէին ստիպողաբար և անհրաժեշտաբար. եղած հա-
մապատասխանող օրինադրութեանց գործադրութիւնը կը
վստահուէր գործադիր մարմնոյ մը, որ միմիայն կը պար-
տաւորէր գործադրել օրէնսդրութիւնները: ասոնց գոր-
ծադրութեան վերահսկող կը լինէր տնօրինող հանրու-
թիւնը, որուն տրամադրութեան տակ իսկ եղած կը լի-
նէր գանգատանաց տետրակ մը: Այս ոգւով չեղած
հաստատութեանց գոյութիւնը միանգամ ընդ միշտ բըւ-
նաբարող և հարստահարող կը լինէր, ընդունուած ա-
նօրինութեան և անիշխանութեան շնորհիւ, որոնց հե-
տեանքները անբարոյականցող իմացականութիւններ ե-
ղած կը լինէին հաստատութեանց գործունէութեան և
գործադրութեան առջև:

Այստեղ, անցեալ ամսոյ 29ին, տեղի ունեցաւ ըն-
թերցարանական ընկերութեան գործադիր մարմնոյ ընտ-
րութիւնը: Գանձագրութեան նախելով՝ ընտրող և ընտ-

րելի պիտի լինէին միմիայն անոնք, որոնք մի առաջին ան-
գամակցած կը լինէին ընկերութեան: Առաջ այս բաց-
արձակ ապօրինութիւնը նկատի առնուած լինելու, նոյն
այս ապօրինութեան չենթարկուող մէկը ընտրող և ընտ-
րելի կը դառնայ: ուրեմն, արդէն ապօրինութեամբ լի-
նելի ընտրութիւնը ապօրինաւոր և չեղեալ կը համար-
ուի: Անձնագրութիւնը կը մնան անձնագէտ յարգելի:

Հանրութեան պատկանող ընկերութիւնը կը պահան-
ջէր կատարել հեռահեղները, երբոր կանոնադրութիւնը
չէր ունենար ստիպողաբար և անհրաժեշտաբար պահան-
ջուած օրինադրութիւնները: 1) Հրաւիրել ընդհանրա-
պէս տեղական հանրութիւնը, որ պիտի կազմէր մեծա-
մասն ներկայութիւն մը: 2) Առաջադրել և հաստատել
ընթերցարանական ընկերութեան գոյութեան փափագը,
որով ընդհանրութիւնը պիտի անգամագործէր ընկերու-
թեան: 3) Ընտրել խմբագրող յանձնախումբ մը, որ
պիտի խմբագրէր ընթերցարանական ընկերութեան գոր-
ծունէութեան և գործադրութեան կանոնադրութիւնը: 4)
Ներկայացնել խմբագրուած կանոնադրութիւնը հան-
րութեան հաւանութեանը և հաստատութեանը: 5) Ըն-
տրել գործադիր մարմինը, հաստատուած կանոնադրու-
թեան համաձայն: Կանոնադրութեան օրինադրու-
թիւնը եւ ասոր իրազորութիւնը պիտի վարմանա-
ցնէին առաջադրուած նպատակը:

ԱՊԱԾԱԻ

Յարգելի Պ. Բոժոժիկ,

«Ներկայիս կուգամ իմացնել թէ ձեր անցեալ շա-
թուան մէկ հեռագրականը՝ ի մասին 60նոց ճախիլի մը
սխոլիմէ ընելուն, ի՞նչ բարոյական ազդեցութիւնը ունե-
ցաւ. յիշեալը զգալով որ հրատարակելի մանրամասնու-
թեանց մէջ իր ճախիլութիւնները պիտի տեսնուին, մեր
միջոցաւ կը խնդրէ որ այլ ևս զանոնք չի հրատարակէր,
որովհետեւ կը խոստանայ ասկէ ետքը ատանկ ճախիլու-
թիւններ չընելու: Քաջայայտ ըլլալով որ սոյն առաջարկը
արդարութեան համաձայն գտնելով պիտի բարեհաճիք
ըստ այնմ վարուիլ:


Մնամ յարգանքօք

Վարսունցոյ ճախիլին բարեկամը

(Գոհ ենք որ նոյն հեռագրականը այսքան անուշա-
կալ բարոյական արդիւնք մը առաջ բերեր է: Ուստի
Պ. Նամակագրին առաջարկը կընդունինք, նկատելով որ
այս բանը կը նմանի բժշկի մը իւր հիւանդին տուած 12
դեղահատերուն, որոնց մէկ քանի հատը հաղիւ թէ
կուլ տուած կըլլայ հիւանդը՝ կատարելապէս կապաքինի
առանց պէտք ունենալու մնացորդները առնելու):



ՍԻՐԱՅԻՆ ԿԱՅԾԵՐ



ԸՍԷՔ ԻՐԵՆ

Անէն իրկուն, մարբնշաղին,
Ո՛ր որիներ (') երաւ երաւ,
Կանցնիք անկոգ. մինչ կը մաղին
Շուրջս բստերներ՝ քոյ ու սարսաւ:

Գրոգրուալոյ՝ աշպէս ինչո՛ւ
Կը սուրաք դոք, որպէս սեզ շանք,
Ու յէք նետեր հաշուացք մաղո
Հոգոյս սլփին մեջ յորձնեռանդ:

Ձե՛ք գիտեր թէ ես, հոս, աւաղ,
Կը ծխոյիմ կոր հաւնապագօր,
Ի սէր անգին աղջկան յրփնաղ,
Որ ա՛յ քոյոց գիս միմաւոր:

Ա՛խ, որիներ եքերանում,
Լո՛ւս մը անոր սարեք ինէ.
Յայտնեցեք թէ՛ ես քրնաւ յեմ
Էակ մանգոք. հոգին՝ ի՛րն է:

Ըսե՛ք իրեն. «Գո սիրահար
Կըսպասեք քեզ՝ սիւսիւրոյ.
Հաւասարիմ է քեզի յա՛ր.
Իսրձիք, նորեն, շո՛ւս. անոր քոյ...»

Սիւսիւրէ, 5 սեպտ. 1900

ԾՈԹՈՐ

(*) ՈՐԻ, սե ագուս (CORNEILLE):

ԶԱՆԱԶԱՆՔ



Թոքախտաւոր Հաւերք. — Շատ տարիներ առաջ հաստատուեցաւ թէ թոքախտը կրնայ փոխանցուիլ մարդու, թոքախտաւոր անասունի մը մօին և կաթին միջոցաւ. սակայն այս օրերս Մ. Հօքառ, անուանի ուսուցիչ մը Ալֆօռ քաղաքին մէջ, հաստատեց թէ այս հիւանդութիւն կրնայ մօրգիկներէն հաւերուն ու թռչուններուն ալ փոխանցուիլ. — Ալֆօռի շրջականներն, սպարակի մը հաւնոցին մէջ տեսակ մը տարօրինակ հիւանդութիւն էր ինկեր. խեղճ հաւերը քանի մը շաբաթ կը չարչրկուէին ու յետոյ կը


մեռնէին: Մ. Հօքառ քննութեան համար հրաւիրուած, բացաւ անոնց թոքերն և զարմացմամբ հաստատեց թէ թոքախտէ կը տառապէին խեղճ հաւերը: Բաւական խուզարկութենէ ետքը գետնուեցաւ վերջապէս այդ նախնիին շարժառիթըն: Ագարակին մէջ թոքախտաւոր մշակ մը որ հասած տեղը կը թքնէր, պատճառն էր բոլոր այդ աղէտներուն. որովհետեւ հաւերն անոր գետնին վրայ չորցած թոքերը կը կտցահարէին միշտ: Հիմա ֆրանսական կառավարութիւնը կը փութայ միտէն ու կաթէն աւելի՝ ծախուած թռչուններու առողջութեան վրայ հսկել. բայց դիւրին է քննական զատ յանձնաժողով մ'ալ օրը մէկ կամ երկու միլիոն սպառող այդ թռչուններուն համար կազմել...

Բոժ. — Իսկ եթէ ատոնց հաւկիթներն ալ քննութեան ենթարկել հարկ ըլլայ. Ֆրանսացիք թող ամենքն ալ նոյն յանձնաժողովին մէջ անդամ արձանագրուին:

Կանանց արդուգարդը հին ժամանակներու մէջ. — Կերեւի թէ հին ատենուան կիները կեղծ մաղերը կը ճանչնային ու անոնցմով կը զարդարուէին: Ոչ ոք իրաւունք ունէր ներս մտնելու այն սենեակէն ուր տիկին մը արդուգարդովը զբաղած էր. բայց եթէ մանկամարդ գեղեցկութիւն մը ու անոր հետ մաղերու առատութեան հազուադէպ շնորհքը ունեցած ըլլար, այն ատեն իր պճնուած միջոցին ամեն ոք ազատ էր սենեակը մտնելու, որպէս զի հիանան իր բաց ձգած ուսերուն և երկայն մաղերուն վրայ: Աչքերնին ու յոնքերնին այնպիսի արուեստով մը կը գեղեցկացնէին որ այսօրուան կանանց անժանօթ է: Անոնք ոչ միայն ներկը, կեղծամը, հոտաւետ ածառն ու գօզմէթիքը կը գործածէին, այլ նաև գանգրահարելու երկաթներ:

Թողքե ժամացոյց. — Վերջերս Գերմանիոյ Տրէզտ քաղաքի ժամագործներէն մէկը յաջողեք է շինելու թուղթէ ժամացոյց մը, որուն թէ շինուածքը և թէ գործածութիւնը շատ դիւրին է եղեր: Մեքենաները նուազ բաղադրեալ ըլլալով, մետաղեայ ժամացոյցներէն շատ աւելի ճշգրտէն կը բանին:

Աշխարհի ամենամեծ փողոք. — Նիւ-Եօրքի նահանգին մէջ Պրոքլայն քաղաքն է որ ունի աշխարհի ամենամեծ փողոքը, ուր օրական 75,000 հայ կը պատրաստուի. 360 գործաւոր և 50 կառքեր հաղիւ կը բաւեն հացերը քաղքին մէջ ցրուելու համար:



Ծ Ի Ծ Ա Ղ

Առաջինութեանց ներկայացուցիչները.—Նը-
շանաւոր փիլիսոփայ մը առաքինութիւններուն
իւրաքանչիւրը կենդանի մը վերագրելով սա-
պէս բաժնած է.

Համբերատարութեան համար — Ուղտը.

Հուսկեան համար — Ծածանը.

Կարգապահութեան համար — Կուղբը (Գոմսուղ)

Խնայողութեան համար — Մրջիւնը.

Աշխատութեան համար — Եզը.

Անկեղծութեան համար — Աղաւնին.

Հաւատարմութեան համար — Շունը.

Հեղութեան համար — Ոչխարը.

Մաքրութեան համար — Կարապը (Թոյ գոշու).

Հանդարտութեան համար — Փիղը.

Հլութեան համար — Էշը.

* *

— Յուսիկ, դպրոցին մէջ լաւ կաշխատիս.
հարցուց անոր հօրեղբայրը, կարգաւ կը սորվիս
կոր.

— Ո՛չ.

— Գրե՛լ.

— Ո՛չ.

— Զարմանալի բան, ի՞նչ կընես ուրեմն օրն
ի բուն.

— Արձակուելնուս կը սպասեմ.

* *

Երիտասարդին մէկը հարուստ վաճառականի
մը ներկայանալով, անոր կըսէ.

— Պարոն, կրնամ ձեզի 50.000 ֆրանք շա-
հեցնել.

— Ի՞նչպէս, ըսէ՛ք, կաղաչեմ.

— Գուք աղջիկ մը ունիք, որուն իբրեւ օժիտ
հարիւր հազար ֆրանք տալու պատրաստ էք.
բայց ես զայն կառնեմ յիսուն հազար ֆրանքով
և ահա մնացեալ 50.000ը դուք կը վաստկիք.

* *

Օր մը 16 տարեկան մանկամարդուհի մը
տուն մը ներկայանալով, պաշտօն կը փնտռէ.

— Ի՞նչ գիտես, կը հարցնէ անոր տան տի-
րուհին.

— Խնամակալ, խոհարարուհի և կաթնտու-
եմ. կը պատասխանէ աղջիկը.

— Ուրեմն ամուսնացած էք.

— Ո՛չ, տիկին, բայց կամքի տէր եմ, կը
սորվիմ.

Թարգմ.

ԱՍՏՂ

ՈՒՅՏՈՒՐՄԱՍԻՕՆ

ԲԱՍՏՐՄԱԼԸԳ

(Կեցեմ նիսիսեցեմ)

Եւր իւթիւնտէ թախթալարըն էթրաֆըն-
տա պաղտաշ օթուրան պէշ ալթը գըզ վէ գասըն
սաթըրլարընըն թըզըրթըլարը պէօյիւք պիր
բաթըրտը չըգարմագտա իտի. Պու սըրատա գա-
բու աշըլըպ քէրէկինին Թագորու իշէրի կիրտի:

— Բարիկուն սեզ. գօլայ կէլէ. եաւլը եէրի
սէմիզ օլսուն. եաւլը եէրի սէմիզ օլսուն:

— Հատի, հատի, տյագտա պօշ տուրմա, պիր
սաթըր ալ տա պաշլա էթ աէօյմէյէ. պուրտա
պօշ տուրմագ եարամաղ:

— Նաւըլ, թէթէն կիլինէ կիթմէտին մի
պիրէ.

— Կիթմիմ ամա օրտա քըֆը եօգ. պիրի-
սին եա:

— Աննատըմ, կալիպա օ օրտա տէյիլ.

— Տէյիլ եա:

Պու սըրատա Մայնօս տըշարը չըգարմագ պէ-
հանէսիլէ Թագորա եագլաշըպ գուլաշընտան պիր
գաշ սէօզ սէօյլէտի.

Թագոր— Պիր աղ սօնրա օ տա կէլիր:

Մայնօս կիւլէր եիւզլէ գաբուտան տըշարը
չըգար:

Թախթալարըն իւթիւնտէ էթլէր տէօյիւլ-
տիւքտէ պիր պէօյիւք թէքնէ իշինէ գօնուպ Մա-
թոս աղանըն էհլի եէնիւտէն հէրքէսին Թախթա-
սընը տօլտուրուր իտի. Կէճէնին էբէյիճէ վագ-
թը կէշմիշ օլուպ, գըզլարըն էլլէրի տախի եօ-
րուլմուշ, արթըգ սաթըր պիլէմէսի իսթէյօրլար
իտի. պու սաթըր պիլէմէսի ատէթա պիր գաշ
օգկա էլմանըն իշինտէ տիր. խանէ սահիպի մէճ-
պուր տըր գըզլարա էլմա իքրամ իթմէյէ:

— Քէրէկին, արթըճաճըգ սաթըրլարլըմըզ
քէսմէյօր.

— Պագսանա, Թախթալարլըմըզտան շիրտէն-
նէր չըգմայա պաշլատը:

— Թաւանա սըբըթ մօրու:

Մատմագէլին պիրի տէօյտիլի էթին իշին-
տէն չըգարմըզ օլտուղու պիր սընըր բարչասընը
սաթուրուպ շաբ տէյի թաւանա եսըբըշտըրտը:

Պրագալըմ քի գըզլար էլմայը եէտիքտէն
սօնրա թէքրար էթ տէօյմէյէ պաշլասընլար. պիզ
եանընտաքի օտանըն պիր բէնչէրէ արաւըզըն-
տան իշէրի պագալըմ. Մատմագէլ Մայնօս իլէ
Արթին պիր մասանըն եանընտա օթուրտուգլա-

ըն հալաէ երևաւք սէսլէ լազըրորը իթմէքտէն գօրգուպ, ֆըսրլթըլա գօնուշմագտա իտիլէր. պիր առա Արթին տուտագլարընը Մայնօսուն գուլաղընա տօղրու եագլաշտըրտը:

— Կէօրիւրէր պիրէ, սօնրա հալիմիզ նէ՛րէյէ վարըր. հէմաէ խըսըմըլ:

— Նէ՛ օլուր մօրու... Աման Մայնօսում, շու պիլսէն սէնի նէ՛ գատար սէվիթօրում. կէճէ կիւնտիւզ հաթըրմտան չըգլաթօրուն:

— Պիլիթօրում պիրէ Արթին ամա, նէ՛ եաբայըմ, պէնի սէվտիլինի պապամ տուլարսա՝ իփիլիլինտէ գաֆալարընը էզէր:

— Ահ Մայնօս, սէնին իչիւն տուլտուղում մուհապէթի թարիֆ իտէմէմ. սըղտյումա թափա սը կիպի իչէրիմ գայնաեօր, պէն սէնին իչիւն էօլլաթօրում վէսէլամ:

— Արթինճիւմ, աղընը պաշընա թօփլա, էօթէ չէքիլ, տէնիլ պահճէսինտէ տէյիլիզ քի պիլի քիմսէ կէօրմէսին, չէլթանըն իչի եօգ...

Տըշարտան պիր գաշ տէֆալար «մօրու Մայնօս» տէյի չաղըրըլտըլընտան, Մայնօս հէման օ թարաֆա տօղրու սէյիրթտի:

— Նէ՛րէտէ գալտըն մօրու. քէօր օլասըճա, պաղըրա պաղըրա պօղաղըմ բաթլատըր:

— Աման պէ սէնտէ, թէ քիւֆթէլէրէ պագընօրտըմ, հէմ քիմնանու քիւֆթէլէրին հիշ տատը եօգ, սարմաագլըլար էյի ամա...

— Սէնին անաեաճագ իչին տէյիլ, պագսանա պօյու պէօյիւմիւշ տէ իչէ տէ գարըլընօր:

Պիր սալ սօնրա քիւֆթէլէր բիշիպ իչէրի կէթիլիլտի վէ ճիւմէսի չէշնիլէրինէ պագըլ:

— Էյի կիւնիլէրէն եէյէսիւնիլ:

— Հայրընը կէօրէսին մօրու:

Պիլիմ թաղոր տախի մէքթէպլի օլտուղունտան, օգուումը օլտուղունու կէօսթէրմէք իչիւն:

— Հատի, երջանկութիւն:

Քիւֆթէ չէշնիլիլիլի իթիթամ պուլտուգտա հէր քէս կիթմէյէ պաշլատը:

— Է հատի գալըն սաալճագլան:

— Վարըն սաալճագլան, գուտուրա պագմայըն, եարըն իչիլմպէ չօրպասընա պուլտուրուն, տէյուպ Մաթսա աղանըն էյիլ ճիւմէսի տէ եօլա գօյտուգտան սօնրա, քէնտի քէնտինէ չէօյլէ տէտի. — Աման, ամամտա տիւնեալա գալմըլըգ

հա, հէփսինին տէ կէօղլա աճ. օ գատար քիւֆթէ եէնտի քի թէքնէտէ գըլմա ալ գալտը. պիլմէմ, գա՛շ սուճուգ եաբապիլէճէիլ:

(Տէփամի)

ՔէՏԻ ԿԷՕԶԻԻ


Զ Բ Օ Ս Ա Ն Ք

ԲԱՌԵՐՈՎ ՇԵՂԱՆԿԻՆ

Առաջին ուղղահայեաց բառս է — Անակնիւլ արտայայտութեանց անտեղիութիւնը խոստովանող:

Երկրորդ երեք բառերս են — Մէկ հորիզանականը՝ երկու տեսակ կողմերու երկրորդ, առաջին ուղղահայեացը՝ արտաթնբրու պլոտիկութիւնը, երկրորդ ուղղահայեացը՝ մտքի տանջանքը: Երրորդ հորիզոնական բառս է — Ընտանի կենդանիներու անխորը և անհաստատարիմը:

Չորրորդ հորիզոնական բառս է — Կարծեցեալ անմահներու հանգստարանը:



Առաջին ճիշդ լուծողին պարգևն է մէկ եւստիսեայ «Հայելի»:

ԱՍՏԳ

Զ Ո Ւ Լ Ա Ր Ա Ն

ՏՊԱԳՐԱԿԱՆ ՏԱՌԵՐՈՒ

ՅԱԿՈԲ ԾԵՐՈՒՆԵԱՆԻ

Կը ձուլէ ամեն լեզուէ տպագրական տառեր, մասնաւորաբար Հայերէն եւ Թուրքերէն, Էօպոս, քատրաթ, Էնթէրլիներ, Գիծ եւ կարնիւթիւր:

Գիները յոյժ դիւրամատչելի: Հասցէ

AGOP DZEROUNIAN SOPHIA (BULGARIE)

— ✂ —



ՊԻՍՔԻԻՅԻ

Անգլիական առաջանակարգ ըզգմատեսակ պիւսքիլիններ այս անգամ սկսան ծախուիլ Մուսալլա Տ. Ագրի Կիւմլիւշճեանի նպարալաճառատունը:

Թէ՛ ապրանք աղնուութիւնը եւ թէ՛ գիներու չափաւորութիւնը ստուգելու համար այցելութիւն մը բաւական է:

Отговорникъ Ж. ИВ. ЖЕКОВЪ

Печатница „Взаимность“ — Варна.